ԱՍԱ՛,
որ սիրում եմ նրանց

ՍՏԱՅԻ՛Ր Ասրճո սիրո ՄԱՍԻՆ
ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ ՀԱՄԱՐ

ՉՈՅՍ ՄԱՅԵՐ

#1 ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ ԱՄԵՆԱԼԱՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

ԱՍԱ՛,
որ սիրում եմ նրանց

ՍՏԱՑԻ՛Ր *Ասրնթ սիրո* ՄԱՍԻՆ
ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ ՀԱՄԱՐ

ՁՈՅՍ ՄԱՅԵՐ

#1 *ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ* ԱՄԵՆԱԼԱՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Ջոյս Մայեր
Ասա՛, որ սիրում եմ նրանց

Բովանդակություն

Ծանոթություն..... 5
1. Աստված սիրում է ձեզ..... 7
2. Արդյո՞ք ես շատ լավն եմ 13
3. Սերը փոխհարաբերություն է.....21
4. Սեր, վստահություն և հավատք 27
5. Ազատագրում՝ վախից..... 33
6. Սերը տարածվում է..... 39
7. Աստծո սերը կփոխի ձեզ 45
Ապրե՛ք նոր կյանք..... 49
Աստված սիրում է ձեզ.....51
Հեղինակի մասին 53

Ծանոթություն

Ես հավատում եմ, որ ամեն ինչից առավել մարդիկ Աստծո սիրո հայտնության կարիքն ունեն: Սա այն հիմքն է, որի վրա կառուցվում է հաղթական կյանքը, և մենք, որպես քրիստոնյաներ, պետք է հիմնվենք սրա վրա: Մենք ոչ թե Աստծո սիրո վերաբերյալ մեծ գիտության կարիք ունենք, այլ հայտնության: Սա միայն կարող է շնորհվել Սուրբ Հոգուց, երբ յուրաքանչյուր հավատացյալ խորհում է Աստծո սիրո մասին, պահում Աստծո սերն իր կյանքում և փնտրում այդ հայտնությունն Աստծո Խոսքի և աղոթքի միջոցով:

Միանգամայն հեշտ է ընդունել, որ Աստված այնքան է սիրում ամբողջ աշխարհը, որ Հիսուսին ուղարկեց՝ մեռնելու բոլորի համար: Բայց փոքր-ինչ դժվար է հավատալ, որ եթե նույնիսկ դուք միակ անձը լինեիք երկրի վրա, Աստված այնքան է սիրում ձեզ, որ դարձյալ կուղարկեր Հիսուսին՝ մեռնելու միայն ու միայն ձե՛զ համար:

Ես տարիներ շարունակ կոտրված քրիստոնյա լինելուց հետո միայն հասկացա Աստծո սերը: Աստված գթառատորեն հայտնեց իմ հանդեպ ունեցած սերը՝ Սուրբ Հոգու միջոցով: Այդ պարզ հայտնությունը փոխեց իմ ամբողջ կյանքը և Իր հետ ունեցած ընթացքը:

Ես հավատում եմ՝ ինչ որ կարդաք այս գրքում, ձեզ նոր խորաթափանցություն և հասկացողություն կտա Աստծո սիրո վերաբերյալ, ձեր մեջ նոր քաղց կառաջացնի՝ այս հայտնությունն անձամբ ձեզ համար ունենալու: Ես հորդորում եմ, որ կարդաք դանդաղ՝ ուսումնասիրելով և խորհելով սուրբգրային խոսքերի և մտքերի շուրջ:

Այս գիրքը խոնարհությամբ ձեզ եմ ներկայացնում՝ իմանալով, որ ես ոչինչ եմ՝ առանց Նրա, և ինչ հայտնություն կամ հասկացողություն էլ ունեմ Նրա Խոսքի վերաբերյալ, միայն Նրա շնորհքով է:

1
Աստված սիրո՛ւմ է ձեզ

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.16

Աստված ընտանիք է ցանկանում, դրա համար ստեղծեց մեզ, որ լինենք Իր երեխաները: Նա չի ցանկանում, որ գործենք մանուկների պես, այլ՝ որ կախված լինենք Իրենից, ապավինենք Իրեն և թույլ տանք, որ Նա սիրի մեզ: Նա ցանկանում է, որ վստահենք և մոտենանք Իրեն ամեն ժամանակ, երբ կարիք ունենք: Նա ցանկանում է անձնական հաղորդակցություն ունենալ մեզ հետ:

Մեզնից շատերը Հովհաննես 3.16 խոսքն ընդհանուր իմաստով են ընդունում. «Այո՛, ես գիտեմ, որ Հիսուսը մահացավ աշխարհի համար»: Սակայն չպետք է մտածենք« որ Հիսուսը մահացավ մարդկանց ընդհանուր խմբի համար: Հիսուսը մահացավ յուրաքանչյուր մարդու համար. Նա մահացավ ձե՛զ համար:

Եթե դուք այս երկրի վրա միակ անձը լինեիք, Նա կմահանար միայն ձեզ համար: Նա կկրեր բոլոր չարչարանք-

ները ձեզ համար: Աստված շատ է սիրում ձեզ: Նա սիրում է հավիտենական սիրով:

Մի օր, երբ մեքենա էի վարում, Աստված խոսեց սրտիս. «Ջո՛յս, դու Իմ աչքի բիբն ես»: Ես նույնիսկ չգիտեի, որ այդ խոսքը գրված է Աստվածաշնչում: Սատանան անմիջապես ինձ մտքեր տվեց. «Արդյո՞ք սա հպարտություն չէ», «Քեզ ինչի՞ տեղ ես դրել»: Այսպիսով, ես սկսեցի ինքս ինձ ասել. «Ես չպետք է այդպես մտածեի»: Մեր մարմնական մտածողությանը խորթ է այն գիտակցությունը, որ մենք յուրահատուկ ենք, շնորհալի և տարբեր: Մեզնից յուրաքանչյուրն ստեղծված է որպես անհատ, որպեսզի տարբերվի մյուսներից:

Երբ մտածում էի այդ մասին, Աստված իմ ուշադրությունը կենտրոնացրեց մի տիկնոջ վրա, ով կանգնած էր շուկայում՝ խնձորների հսկայական կույտի դիմաց, և աչքի էր անցկացնում բոլոր խնձորները, մինչև գտավ մեկը, որ իսկապես լավագույնն էր: Հետո նա ձեռքը երկարացրեց և վերցրեց խնձորը: Դրանով Աստված ինձ ցույց տվեց, որ ես Իր համար «լավագույն խնձորն էի»: Ես յուրահատուկ անձնավորություն էի: Աստված նույն խոսքերն ասում է Իր զավակներից յուրաքանչյուրին: Նա ոչ թե ասում է, որ դուք լավն եք, իսկ մյուսները՝ ոչ, այլ՝ որ մենք բոլորս յուրահատուկ ենք: Սա գրված է Խոսքի մեջ, իսկ Խոսքը յուրաքանչյուրիս համար է: Դուք Աստծո աչքի բիբն եք:

Ես չէի ընդունում այն, ինչ Աստված ասել էր, քանի որ դատապարտություն էի զգում իմ անձի մասին նման ձևով

մտածելու համար: Մոտավորապես երկու օր հետո բացեցի Աստվածաշունչը և, կարդալով Սաղմոս 17.8-ը, ցնցվեցի: Այնտեղ գրված էր. «Պահի՛ր ինձ՝ ինչպես աչքի բիբ, և Քո թևերի շուքի տակ ծածկի՛ր ինձ»: Ես ասացի. «Ուրեմն, դա իսկապես Աստծուց էր: Ես Աստծո աչքի բիբն եմ»: Երկար ժամանակ ինձ յուրահատուկ էի զգում, երբ մտածում էի այդ խոսքերի մասին:

Մարդիկ իրենց սրտում սիրված լինելու տենչանք, փափագ և ցանկություն ունեն: Աստված է մեզ այդպիսին ստեղծել: Շատ մարդիկ հավատում են, որ Աստված սիրում է աշխարհը, Հիսուսին, բայց դժվարությամբ են հավատում, որ Նա սիրում է նաև իրենց: Աստծո Խոսքն ուսուցանում է, որ Աստված սիրում է նրանց այնքա՛ն շատ, որքան Հիսուսին: Նա սիրում է ձեզ այնքա՛ն շատ, որքան Հիսուսին: Ուշադրությամբ կարդանք Հովհաննեսի 5.20-րդ խոսքը.

> *«Որովհետև Հայրը սիրում է Որդուն և ամեն բան ցույց է տալիս Նրան, որ Ինքն անում է, և սրանցից է՛լ ավելի մեծ-մեծ գործեր ցույց կտա Նրան, որ դուք զարմանաք»:*

Այստեղ Աստված ասում է. «Ես այս բոլոր մեծ գործերն անում եմ Հիսուսի միջոցով և սրանցից է՛լ ավելի մեծ գործեր կանեմ Նրա միջոցով, որ դուք զարմանաք»: (Հեղինակի վերապատմումը): Հրաշալի է զարմանալ ինչ-որ բանով և երկյուղած լինել այն բանի հանդեպ, ինչ Աստված է անում:

Մենք կարդում ենք այս խոսքերը, բայց հաճախ բաց ենք թողնում այն, ինչ Աստված ցանկանում է անել մեզ համար: Նա ցանկանում է, որ ուշադրություն դարձնենք այն մեծ գործերին, որ Նա արել է Հիսուսի միջոցով, ապա հիանանք և ասենք. «Տե՛ր, հրաշալի է այն, ինչ Դու արել ես Հիսուսի միջոցով»: Հետո Նա ցանկանում է, որ կարդանք Հովհաննեսի Ավետարանի 14.12-ը, որտեղ Հիսուսն ասում է. «.... Ինձ հավատացողը, այն գործերը, որ Ես գործում եմ, նա՛ էլ կգործի, և սրանցից է՛լ ավելի մեծ բաներ կգործի, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում»:

Աստված միևնույն գործերը կանի ձեր միջոցով, և դրանցից է՛լ ավելի մեծ գործեր կանեք, քանի որ Հիսուսը գնացել է Իր Հոր մոտ: Հավատո՞ւմ եք սրան: Արդյո՞ք դուք իսկապես հավատում եք, որ Աստված սիրում է ձեզ և կգործածի ձեզ:

Մի օր, երբ ես պարապում էի, Աստված ասաց. «Ջո՛յս, ամեն օր Ես շատ բաներ եմ անում մարդկանց համար, քանի որ սիրում եմ նրանց, և նրանք նույնիսկ չեն էլ նկատում դրանք: Նրանք բոլորովին չեն էլ իմանում դրա մասին: Ես քեզ միայն մեկ օրինակ կտամ: Ամեն օր, երբ խոսում եմ արևի հետ և ասում՝ ծագի՛ր, Ես դա անում եմ Ջոյսի, Բեթթիի, Ջեյմի (լրացրե՛ք այստեղ ձեր անունը) համար»:

Մի պահ կա՛նգ առեք և մտածե՛ք սրա մասին: Ամեն օր երկնքում արևը ծագում է ձեզ համար: Այո՛, արևը: Մենք կարծում ենք, թե այդպես էլ պետք է լինի: Մենք գիտենք, որ արևը բարձրանում է ամեն օր, բայց իմացե՛ք, որ այն

ծագում է ձե՛զ համար: Երբ անձրև է գալիս ժամանակին, այն գալիս է ձե՛զ համար: Երբ ձյուն է գալիս, այն դարձյալ գալիս է ձե՛զ համար: Աստված այդչափ սիրում է ձեզ:

«Եվ իմացի՛ր, որ քո Եհովա Աստված է Աստված, հավատարիմ Աստվածը, որ Իրեն սիրողների և Իր պատվիրանները պահողների համար մինչև հազար ազգ ուխտ ու ողորմություն է պահում»:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 7.9

Դուք կարծում եք, թե հազար սերունդը բավական երկար ժամանակահատված է, որպեսզի հարված հասցնեք Աստծո սիրուն: Նա հավիտենական Աստված է, և դուք չեք կարող սպառել Նրան: Շատերը մտածում են, թե սպառել են Աստծուն իրենց պակասություններով և խառնակություններով, բայց դուք չեք կարող դա անել: Սերը չի սպառվում, և դուք չեք կարող ստիպել Աստծուն, որ չսիրի ձեզ: Սերը ինչոր բան չէ, որ Աստված անում է: Նա Ինքն է սերը:

Նույնիսկ ամենակեղտոտ, ապականված մեղավորը, ով երբևէ քայլել է այս երկրի վրա, եթե թքի Հիսուսի աչքերին և ասի. «Ես ամենևին էլ չեմ ցանկանում հաշտվել Քեզ հետ, ես լիովին բավարարված եմ նույնիսկ դժոխք գնալով», այնուամենայնիվ Աստված սիրում է նրան: Ինչպե՞ս կարող էր չսիրել նրանց, ովքեր ընտրված և պահված են Աստծո նպատակի համար:

Հնարավոր է՝ դուք արդեն իսկ ասել եք. «Ես ընդունում եմ Հիսուսին իմ սրտում և սիրում եմ Նրան»: Բայց ես

հարցնում եմ ձեզ, թե որքանով եք հավատում, որ Աստված սիրում է ձեզ:

Սա շատ պարզ պատգամ է ձեզ համար: Աստված սիրում է ձեզ: Բայց սա այն հիմքն է, որ Նա պետք է դնի ձեր մեջ, որպեսզի կարողանաք հասկանալ շատ այլ բաներ:

Կարևոր չէ, թե ինչ եք սովորում կամ ուսումնասիրում Աստծո վերաբերյալ. եթե չեք կարող ընդունել այն փաստը, որ Աստված սիրում է ձեզ, շատ հեռու չեք գնա: Ձեր հանդեպ Աստծո սերը՝ ձեր հավատքի, մեղքից ազատագրվելու և ուրիշներին համարձակորեն ծառայության մեջ առաջնորդելու կարողության հիմքն է: Արդյո՞ք դուք կընդունեք ձեր հանդեպ ունեցած Նրա սերը: Աստված սիրո՛ւմ է ձեզ:

2

Արդյո՞ք ես շատ լավն եմ

«Հույսն էլ չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը փռված է մեր սրտերում Սուրբ Հոգու ձեռքով, որ տրվեց մեզ: Որովհետև երբ որ մենք դեռ տկար էինք, Քրիստոսը մեզ համար իր ժամանակին ամբարիշտների փոխարեն մեռավ: Որովհետև հազիվ թե մի արդարի համար մեկը մեռնի (բայց մի բարի մարդու համար թերևս մեկը համարձակվի մեռնել): Բայց Աստված հայտնեց Իր սերը՝ մեզ, որ երբ դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: Ապա որքա՜ն ավելի հիմա, որ արդարացանք Նրա արյունով, կփրկվենք Նրանով բարկությունից: Որովհետև երբ դեռ թշնամի էինք, Աստծո հետ հաշտվեցինք Նրա Որդու մահով, որքան ավելի, որ հաշտված ենք, կապրենք Նրա կյանքով»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.5-10

Շատերը հավատում են, որ Աստված սիրում է իրենց, քանի դեռ իրենք գործը չեն փչացրել: Սովորաբար« մարդիկ չեն սիրում իրենց անձը, այդ պատճառով եզրակացնում են, որ Աստված նույնպես չի կարող սիրել իրենց: Աստվածաշունչն ասում է. «Ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան....» (Սաղմ. 8.4): Մենք ուղղակի Աստծո ստեղծա-

գործությունն ենք, և Նա սիրում է մեզ, որովհետև սիրում է մեզ: Նա սեր է (տե՛ս Ա Հովհ. 4.16):

Նա սիրում է ձեզ, և դուք յուրահատուկ եք: Սա նշանակում է, որ դուք առանձնահատուկ և եզակի անձ եք: Դուք չպետք է նման լինեք ինձ, և ո՛չ էլ ես պետք է նման լինեմ ձեզ: Մենք թշվառ կլինենք, եթե փորձենք նմանվել ինչ-որ մեկին: Սա հնարավորություն է տալիս սատանային՝ ասելու ձեզ, որ դուք լավը չեք: Փաստն այն է, որ Աստծո համար դուք չպետք է լինեք «շատ լավը»:

Արդյո՞ք Հիսուսը մահացավ ձեզ համար, քանի որ դուք շատ մեծ կամ հրաշալի էիք, թե՞ Նա մահացավ ձեզ համար, քանի որ սիրում էր ձեզ: Աստվածաշնչում ասվում է, որ եթե Նա այնքան սիրեց ձեզ, որ մահացավ ձեզ համար, երբ դեռ մեղավոր էիք, արդյո՞ք չի սիրի ձեզ հիմա, երբ արդարացաք Նրա արյունով (տե՛ս Հռոմ. 5.8,9): Նա այնքան է սիրում ձեզ, որ ծածկում է ձեր ամենօրյա փոքր սխալները: Նա այնքան է սիրում ձեզ, որ ազատում է ձեր ամենօրյա դժվարություններից՝ Իր զորությունով և հաղթությունով:

Մի օր Աստված ինձ ցույց տվեց մի օրինակ, թե ինչպես է Նա նայում մեր սխալներին և թերություններին: Պատկերացրե՛ք մոտավորապես 4-5 տարեկան փոքրիկ երեխայի, ով միշտ հետևում է իր մայրիկին՝ տնային գործեր անելիս: Նա այնքան է սիրում իր մորը, որ վերցնում է ջրով լի փոքրիկ դույլն ու լաթի կտորը և քայլում դեպի տան առաջնամասի փակ պատշգամբի գեղեցիկ պատուհանները: Փոք-

րիկն սկսում է լվանալ և, իսկապես, լավ է լվանում, հետո վերցնում է թղթե սրբիչներն ու չորացնում լվացածը:

Անշուշտ, այս ամենից հետո պատուհանները կեղտոտ և օճառոտ տեսք կունենան: Այս ամենը տեսնելով՝ դուք ուղղակի կցանկանաք բռնել նրա պարանոցից, առավել ևս, որ նա օգտագործել է ձեր լավագույն լաթերն ու սրբիչները: Բայց նա ներս է մտնում և իր նուրբ, քաղցր ձայնով ասում. «Մայրիկ, մայրիկ, ես լվացել եմ քո պատուհանները: Ես այս գործն արել եմ քեզ համար: Ես սիրում եմ քեզ, մայրիկ»:

Սիրող մայրը կասի. «Օ՜հ, հրաշալի գործ ես արել: Շնորհակալություն օգնության համար»:

Շուտով փոքրիկը մեկ այլ գործ է նախաձեռնում՝ այս անգամ նա մաքրում է կեղտոտ հատակը: Մայրը դարձյալ կարգի է բերում սենյակը և ուղղակի բացատրում նրան, որ այլևս նույն սխալը չանի:

Աստված ճիշտ այսպես է վարվում մեզ հետ: Նա միշտ մաքրում է մեր սխալների հետքերը: Եթե դուք անում եք լավագույնը՝ ձգտելով հաճեցնել Աստծուն, իմացեք, որ դա բավարար է Նրա համար: Նա չի ակնկալում, որ դուք ինչ-որ անհնարին բան անեք: Նա կարող է փոխել ձեզ, եթե ասեք. «Տեր, Դու ճիշտ ես, իսկ ես՝ սխալ: Ես փորձել եմ և չեմ կարողանում փոխվել»: Նա կփոխի ձեզ, որովհետև գիտի, որ չեք կարող ինքներդ ձեզ լավը դարձնել՝ առանց Իր օգնության:

«Որովհետև Նա, Ում Աստված ուղարկեց, Աստծո բանն է խոսում, քանի որ Աստված Հոգին չափով չի տալիս: Հայրը սիրում է Որդուն և ամեն բան Նրա ձեռքն է տվել»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.34,35

Մի օր, երբ ուսումնասիրում և խորհում էի այս խոսքի շուրջ, ուրախությունից բացականչեցի՝ գիտակցելով, որ Աստված Իր Հոգին չափով չի շնորհում: Նա չի բավարարվում միայն մի փոքրիկ հպումով:

Փոխարենը՝ ասում է. «Ահա, ընդունե՛ք այն ամենը, ինչ Ինձ է պատկանում»: Այսօր Աստծո զորության և սիրո ամեն մի մասնիկը ձեզ է տրված: Նա ունի այն ամենը, ինչ ձեզ պետք է, և ցանկանում է, որ դուք ընդունեք: Ինչո՞ւ: Որովհետև Նա սիրում է ձեզ: Դուք չպետք է շատ լավը լինեք՝ դրան արժանանալու համար, քանի որ չեք կարող դա անել բավարար կերպով: Դուք չպետք է նաև շատ խելոք կամ խեղճ լինեք: Աստված ցանկանում է այդ ամենը շնորհել, քանի որ սիրում է ձեզ:

Երկրորդ Օրինաց 7.6,7 խոսքերում Աստված ասում է.

«Որովհետև դու սուրբ ժողովուրդ ես քո Եհովա Աստծո համար. քո Եհովա Աստված քեզ ընտրեց, որ դու Նրա համար սեփական ժողովուրդ լինես, երկրի երեսի վրա եղող բոլոր ազգերի միջից: Ոչ թե ձեր բոլոր ազգերից շատ լինելու համար Եհովան ձեզ սիրեց և ձեզ ընտրեց, որովհետև դուք բոլոր ազգերից քիչ էիք»:

Աստված Իսրայելն ընտրեց, որ լինի Իր սեփական ժողովուրդը, և որպես եկեղեցի՝ մենք այսօր հոգևոր Իսրայելն

ենք: Այսպիսով, այս խոսքը որքան նրանց է պատկանում, այնքան էլ՝ ձեզ: Աստված նրանց ասում էր. «Ես ձեզ չընտրեցի այն պատճառով, որ դուք երկրի վրա եղած ազգերից ամենամեծն էիք»: Ինչ վերաբերում է մեզ, Աստված միգուցե կասեր հետևյալը. «Ես ձեզ չընտրեցի այն պատճառով, որ դուք ամեն ինչ ճիշտ էիք անում կամ շատ հրաշալի էիք»:

Շարունակելով Իր խոսքը՝ Նա իսրայելցիներին ասում է՝ դուք ուրիշներից ավելի քիչ էիք:

Եթե դուք ինձ նման եք, անշուշտ, մինչև ձեր փրկվելը, մտածել եք, որ ուրիշներից ավելի վատն եք: Տեսե՛ք, թե ինչ է գրված 8-րդ խոսքում.

> *«Այլ՝ Եհովան ձեզ սիրելու համար և ձեր հայրերին արած երդումը պահելու համար... ձեզ զորավոր ձեռքով ծառայության տանից հանեց, եգիպտացիների փարավոնի ձեռքից ազատեց»:*

Սա բացահայտում է պատճառը: Աստված ասում է. «Ես դրեցի Իմ սերը ձեր մեջ և ասացի, որ դուք սուրբ եք: Ես ասացի, որ դուք յուրահատուկ եք: Ես ոչ թե ընտրեցի ձեզ, որովհետև դուք լավն էիք և հրաշալի, այլ՝ որովհետև Ես սիրում եմ ձեզ»: Գիտե՞ք, թե ինչ է ցանկանում Աստված, որ այսօր անեք: Նա ցանկանում է, որ դուք ընդունեք և ստանաք Իր սերը:

Մեզնից շատերի համար ամենամեծ խնդիրն այն է, որ մենք մեզ չենք սիրում: Մենք չենք հավատում, որ Աստված կամ էլ ինչ-որ մեկը սիրում է մեզ՝ մեր էությամբ հանդերձ:

Մտածում ենք՝ ինչպե՞ս կարող են նրանք մեզ սիրել. մենք այնքա՞ն կեղտոտ ենք: Եթե դուք հավատում եք, որ տգեղ և կեղտոտ եք, կմտածեք, կդատեք և կգործեք տգեղ և կեղտոտ ձևով: Այդ դեպքում դուք չեք կարող բարձրացնել ձեր սրտում ունեցած պատկերացումը ձեր անձի հանդեպ:

Մի ժամանակ իմ ամենամեծ խնդիրն այն էր, որ ես ինձ չէի սիրում և իմ ժամանակի 75 տոկոսը տրամադրում էի ինձ փոխելուն: Մտածում էի, որ ես չափազանց շատ եմ խոսում, ուստի փորձում էի հանգիստ լինել: Բայց երբ հանգիստ էի, ընկճվում էի, և բոլորը ցանկանում էին իմանալ, թե ինչու եմ հանգիստ: Հետո մտածում էի. «Բայց դուք ինձ ասացիք, որ մեծ բերան ունեմ: Հանգի՛ստ թողեք ինձ: Ես ուղղակի փորձում եմ հանգիստ լինել»:

Չեմ կարող ասել, թե քանի տարի դա տևեց: Ես միշտ ընկնում էի փորձության մեջ՝ իմ լեզվի պատճառով: Շատախոս մարդիկ հաճախ ամուսնանում են հանգիստ մարդու հետ: Դա միայն ընդգծում է ձեր մեծաբերան լինելը, նույնիսկ՝ ավելին, սատանան հաճախակի կհիշեցնի ձեզ դրա մասին: Նա ջանասիրաբար աշխատում է, որպեսզի ձեզ մեղավոր զգաք և դատապարտության մեջ ընկնեք:

Աստված ցանկանում է, որ ազատ լինեք դատապարտությունից, բայց դա համարձակություն է պահանջում: Կարևոր չէ, թե որքան մեղավոր եք զգում ձեզ. Աստված չի հատուցի այն բանի համար, որ սխալ եք արել: Իսկապես, դժվար է հավատալ, որ Աստված սիրում է ձեզ նաև այն ժամանակ, երբ ինչ-որ բան սխալ եք արել:

Սատանան միշտ հարձակվում է ձեզ վրա մտքերի միջոցով՝ թե դուք շատ վատն եք, կեղտոտ և տգեղ: Նա ասում է. «Մի ժամանակ դու սա ես արել: Քեզ ինչի՞ տեղ ես դրել: Աստված քեզ նման կեղտոտին երբեք չի օրհնի, սիրելի՛ բարեկամ: Դու այժմ չես կարող վկայել որևէ մեկին: Դու չես կարող որևէ ճիշտ բան անել»:

Ահա այդ ժամանակ է, երբ համարձակություն է պահանջվում, որ ձեր ներքին մարդն ասի. «Հա՛յր, ես սխալ եմ արել, և խնդրում եմ, որ ներես ինձ՝ Հիսուսի արյունով: Ես անկեղծ եմ իմ սրտում և ցանկանում եմ ստանալ Քո ներումը: Սատանա՛, հեռացի՛ր: Հիսուսը վճարել է իմ մեղքերի համար, և դա քո գործը չէ»: Այնուհետև դուք կարող եք լինել ուրախ ու երջանիկ: Հնարավոր է՝ մտածեք. «Ես շարունակ անում եմ միևնույն հիմարությունը»: Մի ժամանակ ես շատ էի մտածում, մինչև որ դադարում էի իմ արարքը դատապարտելուց: Երբ դադարում եք դատապարտելուց այն, ինչ արել եք, դադարում եք նաև դա կրկին անելուց:

Հանցանքը և դատապարտությունը ձեզ պահում են ճնշված և ընկճված վիճակում, և դուք չեք կարող ազատ լինել: Պահանջվում է համարձակություն՝ դատապարտությանը տեղ չտալու համար: Դուք պետք է լինեք համարձակ անձնավորություն և գործեք հավատքով, որպեսզի բարձրանաք և ասեք՝ ո՛չ մեղքին: Սատանան ձեզ կասի. «Մտադրված ես նույնիսկ վատ չզգա՛լ դրա համար: Ինչո՞ւ, դու պետք է մի քանի ժամ վատ զգաս: Այն, ինչ արեցիր, իսկապես վատ էր»: Այն ամենը, ինչ դուք պետք է ասեք,

հետևյալն է. «Ո՛չ, ես վստահ չեմ: Ես բոլորովին էլ վատ չեմ զգալու դրա համար»: Սկզբի մի քանի անգամները դժվար են, բայց 3-4 անգամից հետո կսովորեք:

Եսայի 53.5,6,11 խոսքերը մեզ ասում են, որ Հիսուսը ոչ միայն վերցրեց մեր մեղքերը, այլ նաև կրեց մեր անօրենությունը (որը ներառում է նաև դատապարտությունը): Սատանան չի ցանկանում, որ դուք ազատ լինեք դատապարտությունից: Ինչո՞ւ: Որովհետև, երբ դուք դատապարտության մեջ եք, չեք կարող իրապես զգալ Աստծո սիրո ջերմությունը: Դատապարտությունը պողպատե պատի պես ձեզ բաժանում է Աստծուց: Դուք չեք կարող տեսնել Հայր Աստծուն, երբ մեղքի մեջ եք: Այն ամենը, ինչ կարող եք տեսնել՝ ձեր հանցանքներն ու մեղքերն են:

Ապրե՛ք դատապարտությունից ազատ: Հավատացե՛ք, որ երբ Աստված ասում էր, որ Իր շնորհքը բավարար է՝ ծածկելու նույնիսկ ձեր մեղքերը, հենց սա՛ նկատի ուներ: Նա սիրում է ձեզ, և Նրա շնորհքն ու ներումը ձրի պարգևներ են: Ընդունե՛ք այդ պարգևներն այսօր:

Աստված սիրո՛ւմ է ձեզ:

3
Սերը փոխհարաբերություն է

«Եվ մենք հավատացինք և ճանաչեցինք այն սերը, որ Աստված ունի մեր հանդեպ: Աստված սեր է, և ով մնում է սիրո մեջ, Աստծո մեջ է բնակվում, և Աստված՝ նրա մեջ»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.16

Ինչպե՞ս կարող եք ավելի շատ գիտակցել և տեղյակ լինել Աստծո սիրո մասին: Կարևոր չէ, թե որքան շատ է Նա սիրում ձեզ. եթե դուք չեք գիտակցում կամ տեղյակ չեք դրա մասին, դա ձեզ օգուտ չի տա: Գիտե՞ք, թե որքան լավ եք զգում, երբ ինչ-որ մեկը սեր է ցուցաբերում ձեր հանդեպ: Դուք ձեզ այնքան հրաշալի եք զգում, որ կարող եք ամբողջ մարդկությանն ուրախությամբ ընդունել: Աստված սիրում է ձեզ և ցանկանում է ցուցաբերել այդ սերը: Նա ցանկանում է, որ դուք ամեն օր ժամանակ անցկացնեք Իր հետ:

Արդյո՞ք դուք իրական անձնական հաղորդակցություն ունեք Աստծո հետ: Այն հանգամանքը, որ դուք ինչ-որ ժամանակ առաջ փրկություն եք ընդունել, չի նշանակում, որ հրաշալի հաղորդակցություն ունեք Աստծո հետ:

Առավոտյան, երբ աչքերս բացում եմ, նախ և առաջ մտածում եմ Աստծո մասին, և գիշերը, նախքան քնելս,

դարձյալ մտածում եմ Նրա մասին: Այս աշխարհում չկա ոչ մի բան, որ ցանկանում եմ ավելի շատ, քան՝ իմ Աստծուն ծառայելն ու հաճեցնելն է: Եվ սա արժե ամեն բան:

Մեր հոգում կա մի ճեղք, որը միայն Աստված կարող է լցնել: Ուրիշ ոչ մի բան չի կարող լցնել այդ դատարկությունը՝ ոչ մի ցանկություն կամ նպատակ, որի ետևից դուք վազում եք: Միգուցե ասեք. «Ես դա գիտեմ և արդեն իսկ ընդունել եմ Հիսուսին»: Բայց արդո՞ք դուք ընդունում եք Նրան ամեն րոպե, ամեն օր, ամեն իրավիճակում: Արդյո՞ք ընդունում եք Աստծո սերը:

Աստված սիրում է ձեզ, և դուք Նրա համար յուրահատուկ եք:

Նա ստեղծեց մեզ, որպեսզի հաղորդակցվենք Իր հետ: Սա է Նրա ամենամեծ ցանկությունը և կատարյալ կամքը մեր կյանքի համար: Ամեն առավոտ Նա ասում է. «Բարի լո՛ւյս, Ես սիրո՛ւմ եմ քեզ»:

Իմ ընկերներից մեկին մի անգամ՝ աղոթքի ժամանակ, տեսիլք էր երևացել, թե ինչպես է Հայրը առավոտյան այցելում ամերիկացիների տները: Նա ներս է մտնում՝ հաղորդակցվելու և խոսելու նրանց հետ: Նստում է սեղանի մոտ և սպասում: Մարդիկ՝ արթնացած, գնում-գալիս են: Նրանք Աստծուն շարունակ ասում են. «Հետո, Աստվա՛ծ, մի քիչ էլ սպասի՛ր այստեղ: Հենց որ սա ավարտեմ, կզրուցեմ Քեզ հետ: Ես հետո կհաղորդակցվեմ Քեզ հետ: Հետո, Աստվա՛ծ, հետո...»: Այդպես էլ օրն ավարտվում էր: Եվ ընկերս, ով տեսել էր այս տեսիլքը, ասում էր, որ դա կոտրել

էր իր սիրտը, որովհետև նա տեսել էր, թե ինչպես էր Աստված ափսոսանքով հեռանում այդ տներից:

Չափազանց շատ զբաղված մի՛ եղեք: Եթե դուք ժամանակ չունեք աղոթելու, Աստծո հետ հաղորդակցվելու, դուք չափազանց շատ եք զբաղված: Ժամանակ հատկացրեք՝ ասելու Աստծուն, թե որքա՛ն շատ եք սիրում Նրան: Երբ ամեն ինչ անցնի, և բոլոր դժվարություններն ու հրճվանքները մնան ետևում, կհասկանաք, որ չկար որևէ բան՝ Աստծուց առավել: Եթե դուք չունեք հաղորդակցություն Աստծո հետ, մի քիչ ուշ կլինի ձեզ համար: Սա չի նշանակում, որ դուք Երկինք չեք գնա, այլ՝ բաց կթողնեք այս երկրի վրա հաղթանակած կյանք ապրելու ուրախությունը:

Ես առաջարկում եմ, որ մի տարի առանձնանաք և թույլ տաք, որ Աստված Իր սերը ցուցաբերի ձեզ: Դադարեցրե՛ք ձեր փորձերը՝ սեփական ուժերով հավատքի և զորության մարդ լինելու և հավատքով գործելու: Ուղղակի ե՛տ նահանջեք և գործե՛ք երեխայի պես: Սողոսկե՛ք ձեր Հոր քղանցքը և թո՛ւյլ տվեք, որ Աստված սիրի ձեզ: Դուք չեք կարող սիրել Նրան՝ մինչև թույլ չտաք, որ Նա սիրի ձեզ:

Հովհաննեսի առաջին թղթի 4.16-ում ասվում է.

«Եվ մենք հավատացինք և ճանաչեցինք այն սերը, որ Աստված ունի մեր հանդեպ....»:

Արդյո՞ք դուք առավոտյան արթնանում և ժամանակ եք հատկացնում՝ մտածելու, թե որքան է Աստված սիրում ձեզ: Սովորաբար, երբ առավոտյան արթնանում եք, չեք զգում,

որ կարող եք ինչ-որ բան անել: Բայց դուք պետք է գործածեք ձեր բերանը՝ ակտիվացնելու ձեր մարմինը և թույլ տալու, որ ձեր հոգևոր մարդն արթնանա և հրաշալի գործեր անի:

Այսպիսով, երբ առավոտյան արթնանում եք, պետք է ասեք. «Հայր, ես շնորհակալ եմ, որ շատ ես սիրում ինձ: Շնորհակալ եմ, որ ուղարկեցիր Հիսուսին՝ մեռնելու ինձ համար: Հայր, ես շնորհակալ եմ, որ Սուրբ Հոգու հետ եմ: Շնորհակալ եմ, որ հարության զորությունը բնակվում է իմ հոգում: Տեր, շնորհակալ եմ Քեզ, որ այսօր՝ ուր էլ որ գնամ, օրհնություն կլինեմ: Աստված իմ, Դու սիրում ես ինձ: Դու սիրում ես ինձ իմ փոքրիկ տան մեջ: Դու սիրում ես ինձ, և ես Քո յուրահատուկ երեխան եմ: Ես Քո աչքի բիբն եմ: Դու սիրում ես ինձ»:

Դուք պետք է խոսեք ձեզ հետ, հաշիվ տաք ձեզ ու գիտակցեք, որ շրջապատված եք Աստծո սիրով: Աստվածաշունչն ասում է, որ Աստված Իր ձեռքի մեջ է նկարագրել ձեզ (տես Եսայի 49.16): Ես կարող եմ պատկերացնել Նրան Երկնքում՝ հետևյալ խոսքերն ասելիս. «Նայի՛ր նրան, արդյո՞ք նա գեղեցիկ չէ: Ես նրան շա՛տ եմ սիրում: Նայի՛ր Իմ զավակին Իմ ձեռքի ափի մեջ»: Ձեր պատկերը Նրա ափի մեջ է՝ որպես հաստատակամ հիշեցում, որ Նա սիրում է ձեզ և փափագում է հաղորդակցվել ձեզ հետ:

Հիշե՛ք, որ պետք է երախտապարտ լինեք Աստծուն և զարգացնեք ձեր հաղորդակցությունը Նրա հետ: Երբեմն աղոթքի ժամանակ պետք է ընկնեք երեսնիվայր և գոհա-

նաք Աստծուց, որ փրկված եք: Եմ դարձեք և սիրեք Աստծուն: Կարդացեք Հովհաննեսի առաջին թղթի 4.16,17 խոսքերը, որտեղ Նա ասում է.

> *«.... Աստված սեր է, և ով մնում է սիրո մեջ, Աստծո մեջ է բնակվում, և Աստված՝ նրա մեջ: Սրանում է սերը կատարյալ մեր հանդեպ, որ համարձակություն ունենանք դատաստանի օրը, որովհետև՝ ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում»:*

Իմանալով, որ Աստված սիրում է ձեզ՝ վստահեք և ապավինեք Նրա հավատարմությանը: Բոլոր օրհնությունները՝ մեծ հավատքը, մեղքի դեմ հաղթանակը, բժշկությունը, բարգավաճումը և ուրախությունը կգան և կհասնեն ձեզ, երբ Աստծո սիրուն տեղ տաք ձեր կյանքում: Շատ հաճախ մենք պտտվում ենք դրա շուրջ և մտածում. «Այո՛, ես պետք է սիրեմ Աստծուն»: Ես հավատում եմ, որ դուք առաջին հերթին պետք է թույլ տաք Աստծուն՝ սիրել ձեզ: Դուք չեք կարող արտահայտել ձեր սերն Աստծո նկատմամբ՝ մինչև թույլ չտաք, որ Նա սիրի ձեզ:

Ես կարող եմ ասել՝ հաղորդակցվեք Աստծո հետ, բայց գիտեք, թե ինչպես են դա անում: Երբ Աստված ինձ ասաց, որ հաղորդակցվեմ Իր հետ, ես մոտեցա իմ բազմոցին, նստեցի և ասացի. «Հիմա ի՞նչ, Աստվա՛ծ»: Ես չգիտեի՝ ինչպես հաղորդակցվել Աստծո հետ, քանի որ չգիտեի, թե իրականում որքան շատ է Աստված սիրում ինձ: Ինչպե՞ս եք արտահայտում ձեր զգացմունքները մարդկանց նկատմամբ. արդյո՞ք սիրում և պատվում եք նրանց, երբ վստահ

չեք, որ նրանք սիրում են ձեզ: Դուք կվախենաք հիմար վիճակում հայտնվելուց: Դուք հանգիստ եք նրանց հետ, ովքեր սիրում և ընդունում են ձեզ: Ես կարող եմ հանգիստ շփվել ամուսնուս հետ, որովհետև գիտեմ, որ նա սիրում է ինձ: Նույնը վերաբերում է Աստծո հետ շփմանը: Այսպիսով, վեր կացեք և սկսեք: Տվեք Աստծուն հնարավորություն, և Նա կսովորեցնի, թե ինչպես հաղորդակցվել Իր հետ: Հենց հիմա ինքներդ ձեզ հարցրեք. «Արդյո՞ք ես հանգիստ եմ Աստծո հետ»: Աստված սիրո՛ւմ է ձեզ:

4

Սեր, վստահություն և հավատք

«Որովհետև Քրիստոս Հիսուսում ո՛չ թլփատությունն է մի բան կարող, և ո՛չ էլ անթլփատությունը, այլ՝ հավատքը, որ սիրով գործում է»:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.6

Մեզնից շատերը շատ ժամանակ են հատկացնում՝ փորձելով հավատք ձեռք բերել: Մենք գիտենք, որ առանց հավատքի անհնար է հաճեցնել Աստծուն (տե՛ս Եբր. 11.6), դրա համար աշխատում և պայքարում ենք՝ ավելի շատ հավատք ունենալ: Բայց հավատքը սրտից է, և դա կարելի է ձեռք բերել միայն սիրո հաղորդակցման կապի միջոցով: Ես իսկապես չեմ կարող հավատք սովորեցնել, բայց կարող եմ սովորեցնել հավատքի սկզբունքների մասին, ինչը ձեզ կստիպի այնպիսի քաղց զգալ, որ ամեն ինչ կանեք՝ դրան հասնելու համար: Դա միայն հնարավոր է Աստծո հայտնության միջոցով:

Դադարե՛ք դժվարությամբ հավատք ձեռք բերելու և Աստծուն հաճեցնելու փորձերը, փոխարենը՝ սկսե՛ք ձեր ժամանակն ու ջանքերը նվիրել Նրան սիրելուն: Ամեն ինչ արեք՝ Նրան սիրելով և թույլ տալով, որ Նա էլ ձեզ սիրի:

«Որովհետև հավատքով ենք գնում, և ոչ թե երևույթով»:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.7

Մի անգամ, երբ կարդում էի Սուրբ գրքի խոսքերը, Աստված զորավոր բաներ խոսեց սրտիս: Ես փորձում էի քայլել հավատքով՝ կյանքիս յուրաքանչյուր իրավիճակում, նույնիսկ՝ ամենաչնչին հարցերում: Եվ Աստվածաշնչի «Էմփլիֆայդ» թարգմանության՝ Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի 5.7-ում ասվում է. «...մենք համապատասխանեցնում ենք մեր կյանքը և ղեկավարում մեր անձերը՝ ըստ մեր հավատքի և համոզմունքի...»:

Այլ խոսքով՝ իմ կյանքը հիմնված է այն ամենի վրա, ինչին հավատում եմ Աստծո հետ իմ փոխհարաբերության մեջ: Արդյո՞ք հասկանում եք սա: Այն անձնավորությունը, ով հավատում է, որ ինքն անարդար է, թո՛ղ մոռանա հավատքով քայլելու մասին: Այն անձնավորությունը, ով հավատում է, որ ինքը հողի միջի որթ է, և Աստված չի սիրում իրեն, նույնպես թո՛ղ մոռանա հավատքով քայլելու մասին: Շատ մարդիկ փորձում են քայլել հավատքով, բայց դրանից ավելի ոչինչ չունեն իրենց սրտում:

Գաղատացիներին ուղղված թղթի 5.6-ում ասվում է, որ հավատքը գործում է սիրով: Աստված սրտիս խոսեց հետևյալ ճշմարտությունը. «Մարդկանց կարծիքով՝ այս խոսքի իմաստն այն է, որ եթե իրենք չեն սիրում ուրիշ մարդկանց, իրենց հավատքը չի գործում: Սակայն այս

խոսքն ամենևին էլ դա չի նշանակում: Իրականում, այս խոսքի իմաստն այն է, որ եթե նրանք չգիտեն, թե որքան շատ եմ սիրում իրենց, նրանց հավատքը չի գործի»:

Հավատքը, առանց սիրո, չի գործի: Դուք չեք կարող սիրել ուրիշ մարդկանց. դուք պետք է թույլ տաք, որ Ամենակարող Աստված սիրի ձեզ:

Կա մեծ տարբերություն դրանց միջև: Վստահել Աստծուն, քայլել հավատքով՝ նշանակում է ապավինել և վստահել Նրան ամեն ինչում: Դուք դա չեք կարող անել, եթե չգիտեք, որ Նա սիրում է ձեզ: Դուք երբեք չեք վստահի Աստծուն, եթե չգիտեք, որ Նա սիրում է ձեզ:

Եթե դուք իսկապես գիտեք, թե որքան շատ է Աստված սիրում ձեզ, քիչ կանհանգստանաք ձեր բժշկության կամ ֆինանսական կարիքների բավարարման համար: Պատճառը, որ չեք կարողանում ընդունել ձեր կարիքների լուծումը, այն է, որ լիովին չեք վստահում Աստծուն, չեք հավատում, որ Նա կարող է ամեն բան շնորհել ձեզ: Միգուցե ասեք. «Ես ցանկանում եմ հավատալ, բայց ինչպե՞ս հավատամ դրան»: Աստծո սերը ձեր սրտերում է, և դուք պետք է սկսեք ճանաչել այդ սերը, երբ Նա ցույց է տալիս ձեզ: Աստվածաշնչում ասվում է. «Մենք սիրենք Նրան, որովհետև սկզբում Նա սիրեց մեզ» (Ա Հովհ. 4.19): Անհնար է սիրել Աստծուն, եթե համոզված չեք, որ սկզբում Նա սիրեց ձեզ:

Այս ամենը ձեր մե՛ջ է, ձեր սրտո՛ւմ: Աստված սիրո՛ւմ է ձեզ: Դուք հրաշալի՛ եք: Դուք գեղեցի՛կ եք: Դուք թանկագի՛ն եք: Դուք ցնցո՛ղ եք: Աստված սիրո՛ւմ է ձեզ: Ամբողջ աշխար-

հում ոչ ոք երբևէ ձեզ չի սիրի այնպես, ինչպես Աստված է սիրում: Աստծուց բացի՝ ոչ ոքի կարիքը չունեք, սակայն Նա ձեզ կտա նաև այլ ընկերներ: Ճշմարտությունն այն է, որ եթե ուրիշ ոչ ոք չլինի՝ բացի Աստծուց և ձեզնից, միևնույն է, ձեր կյանքը հրաշալի կդասավորվի: Աստված կլինի ձեր լավագույն ընկերը: Նա կլինի ձեր ընկերը, եթե դուք ընկեր չունեք: Նա կլինի ձեր մայրը կամ հայրը, եթե դուք ծնող չունեք:

Աստված շատ է սիրում ձեզ: Ահա թե ինչու կարող եք հավատալ Նրան ամեն հարցում: Նա այնքան է սիրում ձեզ, որ ցանկանում է՝ ձեր ուզածն ունենաք: Մինչև չիմանաք այս ճշմարտությունը, երբեք չեք գործի բավականաչափ հավատքով՝ ինչ-որ բան ընդունելու համար: Հավատքը գործում է սիրով, այսինքն՝ հավատքը գործում է, երբ Աստծուն թույլ եք տալիս սիրել ձեզ: Հավատքը չի գործում ձեր կարողությամբ, որ վեր կենաք և սիրեք ինչ-որ մեկին: Թո՛ւյլ տվեք Աստծուն՝ սիրել ձեզ և, ուր որ գնաք, ամբողջ օրը Նրան ասեք. «Տե՛ր, ես գիտեմ, որ սիրում ես ինձ: Ալելուի՛ա, Հա՛յր, ես փառաբանո՛ւմ եմ Քեզ: Մեծարո՛ւմ եմ Քո անունը»:

Հավատքն ընդդեմ մարմնի գործերի

Եփեսացիներին ուղղված թղթի 2.8-ում գրված է. «Որովհետև շնորհքով եք փրկված հավատքի ձեռքով....»: Արդյո՞ք գիտակցում եք, որ ոչինչ չեք արել փրկվելու համար: Մեզնից շատերն այնքա՛ն ապականված էին, երբ Հիսուսը փրկեց, և դա, անշուշտ, կախված չէր մեր բարի գոր-

ծերից կամ որևէ ճիշտ բան անելու կարողությունից: Մեր փրկության միակ պատճառն այն էր, որ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա (տե՛ս Հովհ. 3.16):

Շնորհքը կարող է սահմանվել նաև որպես Աստծո կամք՝ գործածելու Իր կարողությունը ձեր կյանքում՝ ձեր կարիքները բավարարելու համար: Ինչպես Աստված Իր շնորհքով բավարար հավատք տվեց փրկվելու, այնպես էլ Նա Իր սիրով հավատք է տալիս բժշկվելու, բարգավաճելու, վստահելու, որ Նա ձեր բժիշկն է, ձեզ ապահովողը: Եթե այն հավատքը, որ Նա հաղորդեց ձեզ, բավարար էր փրկելու բոլոր մեղքերից, ապա միևնույն հավատքը, որ ձեր մեջ է, բավարար է նաև ձեր կյանքի մնացած կարիքները բավարարելու: Եթե դուք հավատում եք, որ Աստված սիրում է ձեզ, և իրապես ճանաչում եք Նրա սերը, կվստահեք Նրան: Դուք համոզված կլինեք Աստծո Խոսքի ճշմարտության վրա: Դուք կհավատաք, որ Նա երբեք չի ստում, քանի որ սիրում է ձեզ:

Ըստ «Էմփլիֆայդ» Աստվածաշնչի՝ «հավատքը՝ ձեր ամբողջ մարդկային էության ապավինումն է Նրան», «ամբողջությամբ վստահելն ու ապավինելն է Նրա զորությանը, իմաստությանը և բարությանը» (տե՛ս Կողոս. 1.4): Երբ թույլ տաք, որ Աստված սիրի ձեզ, կսովորեք սիրել ու վստահել Նրան և կունենաք հավատք:

Աստված սիրո՛ւմ է ձեզ:

5
Ազատագրում՝ վախից

«Վախ չկա սիրո մեջ, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը տանջանք ունի, բայց նա, ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18

Սովորաբար, մենք համարձակությամբ առաջ ենք շարժվում հավատքի քայլերով՝ վստահելով, որ Աստված սիրում է մեզ: Բայց հանկարծակի ինչ-որ բան հարձակվում է մեզ վրա:

Հավատքի ամենամեծ գողը՝ պարագաներն են՝ այն վատ միջադեպերը, որ տեղի են ունենում մեզ հետ: Ոչինչ չի խանգարում հավատալու, որ Աստված սիրում է ձեզ, մինչև որ պարագաները չեն փորձում ապացուցել հակառակը: Այնուհետև սատանան գալիս է իր վախով և դատապարտությամբ՝ բաժանելու ձեզ Աստծո սիրուց, որը կարող էր ազատագրել ձեզ այդ պարագաներից: Սատանան ձեզ ասում է. «Լավ, ի՞նչ կասես սրա մասին: Ես մտածում էի, որ Աստված սիրում է քեզ: Ինչո՞ւ են վատ բաներ տեղի ունենում քեզ հետ: Դու պետք է ինչ-որ սխալ բան արած լինես: Աստված իսկապես բարկացած է քեզ վրա»:

Այդ ամենից հետո դուք կորցնում եք վստահությունն Աստծո հանդեպ, իսկ Նա չի կարող ձեզ օգնել, եթե չեք վստահում Նրան: Դուք չեք կարող վստահությամբ կամ հավատքով լցված լինել, եթե չգիտեք, որ Աստված սիրում է ձեզ: Եվ եթե ընդունեք սատանայի վախի և դատապարտության բեռը, չեք էլ իմանա, թե որքան շատ է Աստված սիրում ձեզ: Հովհաննեսի առաջին թղթի 4.18-ում հզոր և ցնցող խոսք է ասվում. «.... կատարյալ սերը հեռացնում է վախը»: Ես խորհում էի այս խոսքի շուրջ, փորձում հասկանալ դրա իմաստը, և մի գեղեցիկ օր Աստված, ի վերջո, հայտնություն տվեց ինձ, որ կատարյալ սերը հեռացնում է վախը, և Աստված այդ կատարյալ սերն է:

Երբ դուք իմանաք, թե որքան կատարյալ է այդ սերը ձեր հանդեպ, ամբողջ ստեղծագործության մեջ չի լինի մեկը, որից կարող եք վախենալ: Անհնարին է վախենալ, եթե ունեք անձնական հայտնություն, որ Աստված սիրում է ձեզ:

Անհնարին է վախենալ ձախողումից, եթե գիտեք, որ Աստված սիրում է ձեզ: Դուք չեք կարող ձախողվել, եթե կախված եք Նրանից: Ձախողվելու միակ ձևն այն է, որ կախվեք ձեր անձից: Եթե իմանաք, որ Աստված սիրում է ձեզ, երբեք չեք վախենա ձախողումից: Եթե իմանաք, որ Աստված սիրում է ձեզ, երբեք չեք վախենա մերժվելուց: Աստծո սերն այնքան մեծ է, որ ծածկում է ամեն ինչ: Դուք մտածում եք, որ այն Աստված, Ով ձեզ փրկեց և ազատագրեց, ձեզ դատապարտելու է: Սատանա՛ն է դատապարտություն բերողը: Աստված ձեզ կօգնի՝ գիտակցել

մեղքը, ապա կուղեկցի՝ դուրս գալ այդ ճանապարհից: Իսկ սատանան ձեզ կդատապարտի, ապա կասի, որ տվյալ իրավիճակից դուրս գալու ճանապարհ չկա:

«Էմփլիֆայդ» Աստվածաշնչում Հովհաննեսի առաջին թղթի 4.18-ը գրված է հետևյալ կերպ.

«Սիրո մեջ վախ չկա (սարսափ գոյություն չունի), այլ՝ բարձրագույն աճ (ամբողջ, կատարյալ) սերը փակում է դռները վախի առջև և հեռացնում սարսափի ամեն մի հետք: Որովհետև վախն իր հետ բերում է պատժվելու միտք, և (ուստի) ով որ վախենում է, նա չի հասել սիրո կատարյալ հասունությանը (դեռևս չի աճել սիրո ամբողջական կատարելության մեջ)»:

Շատ մարդիկ մտածում են, որ այս խոսքի իմաստը հետևյալն է՝ եթե դուք բավարար չափով սիրեք ինձ, չեք վախենա ինձնից, կամ էլ՝ եթե բավարար չափով սիրեք ինչ-որ մեկին, վախը կհեռանա ձեր կյանքից: Բայց Աստվածաշունչը սա նկատի չունի: Այս խոսքի իմաստն այն է, որ եթե թույլ տաք՝ Աստված սիրի ձեզ, չեք վախենա: Դուք պետք է թույլ տաք, որ Աստված սիրի ձեզ, եթե չեք ցանկանում վախ ունենալ ձեր կյանքում: Հենց հիմա հավատքով ընդունեք Աստծո ամբողջական սերը, որ ձեզ է պատկանում:

Այնուհետև Աստված ինձ տվեց այն հայտնությունը, որ Իր սերը հեռացնում է վախը: Եվ ես դա պետք է իրագործեի: Երբ մենք ավտովթարի ենթարկվեցինք, մտածում էինք, որ փոխանցման տուփը խախտվեց: Դա կրկին տեղադրելու համար 400-500 դոլար կպահանջվեր, իսկ մենք

այդ ծախսը չէինք նախատեսել: Այդ առավոտ Աստված այցելեց ինձ և ասաց հետևյալը. «Ջո՛յս, օրդ անցկացրու՝ Ինձ սիրելով, և թո՛ւյլ տուր, որ Ես էլ քեզ սիրեմ: Քեզնից ուրիշ ոչինչ չի պահանջվում: Դու չպետք է փորձես լինել մեծ հավատքի կին: Ահա, թե ինչ պետք է անես՝ պարզապես մնաս Իմ սիրո մեջ»:

Այսպիսով, ես քայլում էի՝ Աստծուն երգելով և հրաշալի ժամանակ անցկացնելով: Եվ հանկարծակի լսեցի ամուսնուս ձայնը ավտոտնակից: Բայց չէ՞ որ նա մոտավորապես 45 րոպե առաջ աշխատանքի էր գնացել: Նա դուռը բացեց և ասաց. «Ես այդպես էլ չկարողացա փոխել մեքենայի արագությունը: Մենք պետք է ամրացնենք փոխանցման տուփը»: Ես փակեցի դուռը և սկսեցի ծիծաղել: Ես չէի որոշել այդպես վարվել: Այդ ծիծաղն ուղղակի դուրս հորդեց հոգուցս: Աստված ինձ ցույց տվեց, որ դրա պատճառն այն էր, որ առավոտյան Նրա սիրո մեջ էի եղել:

Երբ Աստծուն թույլ եք տալիս սիրել ձեզ, դրանով դուռ եք բացում հավատքի համար: Ես սկսեցի ծիծաղել, ինչը հավատքի դրսևորում էր:

Աբրահամը ծիծաղում էր հավատքի ծիծաղով: Երբ Աստված եկավ և ասաց, որ որդի է ունենալու, Աբրահամը ծիծաղեց և ասաց՝ փա՛ռք Աստծուն, ես հավատո՛ւմ եմ: Իսկ Սառան այդ ժամանակ ծիծաղեց կասկածի և անհավատության ծիծաղով: Աստված չկշտամբեց Աբրահամին, բայց Սառային ուղղեց: Նա Աբրահամին չնախատեց ծիծաղելու համար, քանի որ դա հավատքի ծիծաղ էր:

Երբ սատանան հակառակվում է ձեզ, դուք կարող եք ծիծաղել նրա վրա: Չէ՞ որ դուք Աստծուն այնքան լավ եք ճանաչում, որ սատանայի հնարքներն ուղղակի անհեթեթություն են թվում: Դուք վստահ եք, որ Աստված սիրում և պաշտպանում է ձեզ: Այսպիսով, երբ ես ծիծաղում էի՝ լսելով Դեյվի խոսքերը, Աստված մի շատ զորավոր հայտնություն տվեց ինձ, Նա մեղմ և ցածր ձայնով երեք անգամ ասաց. «Ջո՛յս, եթե շարունակես մնալ Իմ սիրո մեջ, Ես երբե՛ք չեմ հուսահատեցնի քեզ»: Այս խոսքերը կարծես արձագանքեցին տնով մեկ© «Ես երբե՛ք չեմ հուսահատեցնի քեզ: Ես երբե՛ք չեմ հուսահատեցնի քեզ...»: Եթե վստահեք Աստծուն, թույլ տաք, որ Նա սիրի ձեզ, և դուք էլ Նրան սիրեք, կմոռանաք հավատքով գործելու ձեր բոլոր մարդկային փորձերը. միայն թույլ տվեք, որ Աստված սիրի ձեզ, և դուք էլ Նրան սիրեք, այդ ժամանակ դուք հեշտությամբ կվստահեք Նրան: Աստծո սերը կհեռացնի ամեն վախ:

Աստված սիրո՛ւմ է ձեզ:

6
Սերը տարածվում է

«Եվ այս պատվիրանն ունենք Նրանից, թե նա, ով Աստծուն սիրում է, իր եղբորն էլ սիրի»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.21

Դուք Աստծո յուրահատուկ զավակն եք: Նա այս խոսքերն ասել է Երկրորդ Օրինաց 7.6-ում: Եթե սկսեք գործել այս խոսքի համաձայն, դա կփոխի աշխարհը: Դուք կգնաք շուկա՝ ժպիտը ձեր դեմքին, ապա կվերցնեք մթերքների սայլակը և կասեք. «Այն ամենը, ինչին դիպչում եմ, օրհնված է: Ալելուիա: Այսօր այս ամենն օրհնված է, որովհետև ես այս խանութում եմ: Փա՛ռք Աստծուն»: Շշուկով երգելով՝ անցե՛ք խանութի միջով և եղե՛ք յուրահատուկ՝ ուր էլ որ գնաք:

Երբ մենք իմանանք, թե որքան յուրահատուկ ենք, և սկսենք գործել այն գիտակցմամբ, որ Աստված սիրում է մեզ, կարող ենք աշխարհը շահել Քրիստոսի համար: Սերը կտարածվի քամու և կրակի նման: Բայց ոչ մի լավ բան էլ չեք անի, եթե ամենուրեք ասեք, որ դուք քրիստոնյա եք, այնուհետև գոռգոռաք բոլորի վրա: Դուք ասում եք. «Ես քրիստոնյա եմ», բայց երբ որևէ ավտոմեքենա կտրում է

ձեր ճանապարհը, բարկանում և ասում եք. «Շտապի՛ր, հիմարի՛ գլուխ, մի՛ խանգարիր: Չգիտե՞ս, որ պետք է հասնեմ ժողովի: Ես կուշանամ, ա՛յ մարդ»:

Այսպիսի վեճեր մենք երբեմն ունենում ենք: Արդյո՞ք դուք պատրաստ եք ամուր բռնելու հաղթությունը և ասելու. «Սատանա՛, դու բավական երկար ժամանակ ինձ ղեկավարել ես ստերով և վախով: Ես յուրահատուկ անձնավորություն եմ և հաղթանակ եմ ունենալու Հիսուսի անունով, քանի որ Աստված սիրում է ինձ, և դու չե՛ս կարող որևէ բան անել»: Աստծո սերը, որ մեր մեջ է, կազատագրի ձեզ վախից, և դուք չեք վախենա այդ սերը տարածելուց: Աստված ցանկանում է՝ հավատաք այն խոսքին, որ Նա ավելի մեծ գործեր կանի ձեր միջոցով, քանի որ Հիսուսը գնաց Իր Հոր մոտ: Արդյո՞ք դուք իսկապես հավատում եք, որ Աստված կգործածի ձեզ: Աստված կտա ձեզ այն, ինչի համար հավատում եք Նրան: Դուք չեք վախենա առաջ շարժվելուց:

Ես նույնիսկ չեմ կարող ասել ձեզ, թե քանի անգամ եմ կանգնած եղել հավատքի ժայռի եզրին, այսինքն՝ պատրաստ եմ եղել ինչ-որ ահավոր բան անելու, բայց Աստված ասել է. «Շարժվի՛ր, Ջո՛յս, շարժվի՛ր: Ես մեծ գործեր կանեմ քո միջոցով: Շարժվի՛ր»: Ես քայլ եմ արել, և Աստված երբեք թույլ չի տվել, որ վայր ընկնեմ: Գիտե՞ք, թե ինչու չպետք է անհանգստանամ ձախողվելուց և առաջ շարժվելուց: Որովհետև գիտեմ, որ Աստված սիրում է ինձ: Նա սիրում է ինձ և գիտի, որ ես էլ սիրում եմ Իրեն, և Իր շնորհ-

քով, կյանքս ներդրել եմ Իր համար: Եթե դուք այսպես եք վարվել և սիրում եք Աստծուն՝ իմանալով, որ Նա էլ ձեզ է սիրում, ամբողջ ստեղծագործության մեջ չի գտնվի որևէ խնդիր, որ կհաղթի ձեզ:

Հռոմեացիներին ուղղված թղթի 8.35-39-ում գրված է.

«Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց՝ փառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր: Ինչպես գրված է, թե Քեզ համար մեռցվում ենք ամեն օր և մորթվելու ոչխարի պես համարվեցինք: Բայց այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, ով մեզ սիրեց: Որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ զորություններ, ո՛չ ներկա բաներ, ո՛չ էլ գալու բաներ, ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն և ո՛չ մի ուրիշ ստեղծված բան չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսում է»:

Դուք միգուցե գաղափար չունեք, թե որքան է Աստված ցանկանում, որ ազատ լինեք: Աստված ցավում է, երբ դուք տխուր եք: Երբեմն արթնանում եք և ամբողջ օրը վատ տրամադրության մեջ եք: Դուք ոտքով խփում եք կատվին, բղավում եք երեխաների վրա, ատում եք հարևաններին և ունեք ծերացած, մռայլ, դժգոհ տեսք: Երբեմն այն ամենը, ինչ ես անում եմ, աշխատանքն է՝ աշխատանք, աշխատանք, աշխատանք, և ոչ ոք դա չի գնահատում: Ես գիտեմ, թե ինչ եք անում նման դեպքերում, որովհետև ինքս էլ երբեմն նույնն եմ անում: Երբ երեխաները գալիս են տուն, դուք մտածում եք. «Ինչո՞ւ չեք մնում դպրոցում օրը 14 ժամ՝ 7 ժամվա փոխարեն»: Գիտե՞ք, սա ցավ է պատճա-

ռում Աստծուն: Ես չեմ փորձում այնպես անել, որ ձեզ վատ զգաք: Ես ցանկանում եմ, որ գիտակցեք հետևյալը՝ եթե դուք հավատում եք, որ Աստված սիրում է ձեզ, կարձագանքեք այդ սիրուն, և այդ սերը կլցնի ձեզ ու կհոսի մարդկանց վրա: Դուք կլինեք ազատ և սիրված՝ լի բարության պտուղներով:

Եթե ամուր բռնեք այն փաստը, որ Աստված սիրում է ձեզ, ձեր բժշկությունը, բարգավաճումը կկանգնեն ձեր առջև, և ձեր կարիքները կբավարարվեն: Ինչո՞ւ: Որովհետև դուք կսկսեք հանգստանալ: Աստված չի կարող շնորհել մեզ շատ բաներ հիմնականում այն պատճառով, որ մենք չափազանց զբաղված ենք՝ դրանք ձեռք բերելով: Նա պարզապես չի կարողանում մեզ ընդհատել, որպեսզի ի վիճակի լինենք՝ դրանք ընդունելու: Աստված ցանկանում է, որ դուք հանգստանաք Իր մեջ և միայն սիրեք Իրեն: Նա ցանկանում է, որ թույլ տաք Իրեն սիրել ձեզ և ընդունեք Իր սերը: Սատանան չի կարող կանգնեցնել այդ հեղեղը, որովհետև եթե դուք սիրող եք, պետք է նաև տվող լինեք: Դուք չեք կարող սիրել և չտալ:

Աստվածաշնչի Երկրորդ Օրինաց 7.6-ում ասվում է. «...Աստված քեզ ընտրեց, որ դու Նրա համար սեփական ժողովուրդ լինես...»: Աստված կանչել է ձեզ: Միգուցե այս պահին ձեր ծառայությունը ձեր ընտանիքում է, բայց Աստված կանչել է ձեզ: Եթե իսկապես ցանկանում եք գործել Աստծո համար, հենց սկզբից պետք է ճիշտ հիմք դնեք՝ դուք պետք է իմանաք, որ Աստված սիրում է ձեզ: Մի՛ վատ-

նեք ձեր ամբողջ հոգևոր էներգիան՝ կենտրոնանալով ձեր անձի շուրջ և բավարարելով ձեր կարիքները: Այն, ինչ ցանկանում եք, արագ և պարզ կերպով ասեք Աստծուն, ապա զարգացրեք ձեր հավատքը այլ մարդկանց կարիքները բավարարելու համար: Հիսուսն աղոթում և փնտրում էր Իր Հոր երեսը, որպեսզի զորացած դուրս գար և բավարարեր այն մարդկանց կարիքները, ովքեր գալիս էին Իր «հավատքի սեմինարներին»:

Հետո Նա քարոզում էր նրանց, ձեռնադրում էր, և նրանք ընդունում էին հրաշքները: Նա ամբողջ ժամանակ չէր նստում ինչ-որ անկյունում՝ փորձելով հավատալ Աստծուն այս կամ այն բանի համար: Դուք պետք է ասեք Աստծուն այն, ինչ ցանկանում եք, իհարկե՝ խոսքն իրական բաների մասին է: Ձեր կյանքի հիմնական ցանկությունը պետք է լինի այլ մարդկանց կարիքները բավարարելը: Ճշմարիտ բարգավաճումը՝ Աստծո կարողությունը գործածելու ունակությունն է՝ բավարարելու յուրաքանչյուր կարիք, որ ձեր առջև կանգնած է: Աստծո սերը ձեզ կարողություն կտա՝ ուրիշների կարիքները ձերինից առաջ դասելու: Դուք կսկսեք մտածել, որ Աստված այնքան է սիրում ձեզ, որ ընդունակ կդարձնի՝ մոտենալու և սիրելու այն մարդկանց, ովքեր ամեն ինչից դժգոհ են և չգնահատող:

Ոչինչ չի պահանջվում սիրելու համար նրան, ով սիրում է ձեզ: Դրա մեջ ոչ մի կեղծավորություն չկա: Ցանկացած մեղավոր մարդ կարող է դա անել: Բայց երբ սիրեք ձեզ համար տհաճ մարդուն, շարունակ համառորեն պնդեք

ձեր զգացմունքները, Աստծո սերը կփոխի նրան: Դա կարող է պահանջել մեկ, հինգ կամ էլ քսանհինգ տարի, բայց, այնուամենայնիվ, արժե դա անել: Որքա՞ն է Հիսուսը սպասել ձեզ: Աստված սիրում է ձեզ և այն մարդկանց, ովքեր շրջապատում են ձեզ: Փրկված լինեն, թե մեղավոր, Նա սիրում է նրանց, և ցանկանում է գործածել ձեզ որպես խոողովակ՝ նրանց վրա լցնելու Իր սերը:

Մի՛ վախեցեք առաջ շարժվելուց: Աստծո սերը ձեզ ազատագրում է վախից և դատապարտությունից, և Նա ձեզ տվել է սիրելու կարողություն: Որոշե՛ք տարածել Աստծո սերն ամենուրեք: Սկսե՛ք ընկերական լինել մարդկանց նկատմամբ: Դա թող լինի ձեր աշխատանքը Քրիստոսի մարմնի մեջ: Խնդրե՛ք մարդկանց ճաշել ձեզ հետ և թո՛ւյլ տվեք, որ մարդիկ այցելեն ձեզ: Սեղմե՛ք մարդկանց ձեռքերը՝ ժպիտով: Աստված ինչ-որ բան ունի անելու ձեզ համար: Նա ցանկանում է ձեզ գործածել այնպես, ինչպես չի գործածել այս երկրի վրա ապրող մեկ ուրիշ արարածի: Կան մարդիկ, որոնց միայն դուք կարող եք ծառայել: Ձեզնից բացի ոչ ոք չի կարող հասնել այդ մարդկանց: Խնդրե՛ք Աստծուն, որ ձեզ ճանապարհներ ցույց տա՝ Իր սիրով մոտենալու նրանց, և Նա կսովորեցնի ձեզ:

Աստված սիրո՛ւմ է ձեզ:

7

Աստծո սերը կփոխի ձեզ

«Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ Նա սիրեց մեզ և ուղարկեց Իր Որդուն՝ քավություն մեր մեղքերի համար»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.10

Աստված սիրում է մեզ, բայց ես չեմ կարծում, որ մեզնից շատերը իսկապես հասկանում են այն սերը, որով Աստված սիրում է մեզ: Երբ սկսեցի խորհել այդ սիրո մասին, Աստված ինձ ցույց տվեց, որ եթե իսկապես ճանաչեինք մեր հոգում, թե որքան շատ է Նա սիրում մեզ, կբարձրանայինք և կդառնայինք բոլորովին այլ մարդիկ, քան շատ անգամներ ներկայանում ենք: Խորհեք ձեր հանդեպ Աստծո սիրո մասին: Ահա թե ինչը կփոխի ձեզ: Եթե դուք չեք սիրում ինչ-որ բան ձեր անձի մեջ, իմանալով հանդերձ իմացեք, որ Աստծո սերը կփոխի ձեզ: Ինչ եք զգում, երբ իմանում եք, որ ինչ-որ մեկը սիրում է ձեզ: Դուք լավ եք զգում, ճիշտ է: Աստված ինձ ասաց, որ որոշ մարդիկ, ովքեր կկարդան այս գիրքը, ատում են իրենց անձը: Դուք ատում եք այն բաները, ինչ անում եք, և հաճախակի պայքարում եք հին մարդու դեմ՝ չընդունելով, որ նոր ստեղծագործություն եք:

Քանի դեռ դուք ամեն տեղ գնում եք՝ ձեր անձից վատ զգալով, ձեզ ատելով, չսիրելով և չգիտակցելով, թե որքան յուրահատուկ եք, երբեք չեք գործի յուրահատուկ կերպով: Աստվածաշնչում ասվում է. «Որովհետև նա՝ ինչպես որ իր սրտում հաշիվներ անող է՝ այնպես է...» (Առակ. 23.7): Սրա պատճառն այն է, որ դուք իսկապես ամուր չեք բռնել այն փաստը, որ Աստված սիրում է ձեզ: Զորավոր բան է՝ իմանալ, թե որքան շատ է Նա սիրում ձեզ: Աստված ցանկանում է, որ հաշտ ապրեք Իր հետ, և ձեր ամենօրյա փոխհարաբերություններն ամուր հիմք ունենան: Ահա թե ինչը կփոխի ձեզ: Եթե դուք Աստծուն չեք տալիս առաջնահերթությունը, Նա չի կարող անել այն, ինչ ցանկանում է: Իսկ եթե ձեր ծածուկ ժամանակն անցկացնում եք Աստծո հետ՝ ուղղակի սիրելով Նրան և թույլ տալով, որ Նա սիրի ձեզ, ձեր ներսի հոգևոր մարդը կաճի և կզորանա:

Մարդկանց մեծ մասը ծույլ է և գերադասում է դա չանել: Մարդիկ կցանկանային, որ մեկ ուրիշը դա աներ իրենց փոխարեն: Պատճառաբանություններ մի՛ փնտրեք: Յուրաքանչյուր ոք, ով ընթերցում է այս խոսքերը, եթե փոխհարաբերություն չունի Աստծո հետ, դատապարտված է, քանի որ դրանից անմիջապես հետո սատանան կգա և կասի. «Բայց դու ուրիշ շատ բաներ ունես անելու»: Ես գիտեմ, թե ինչպես է դա լինում. սատանան պատճառներ է բերում՝ մեկը մյուսի ետևից: Լրջորեն վերաբերվեք Աստծո հետ և կանչեք Նրան: Աստծո Խոսքը և Նրա հետ հաղորդակցությունը կփոխեն ձեզ:

Աստված ձեզ ընդունակ է դարձրել: Պողոսը Փիլիպեցիներին ուղղված թղթի 4.13-ում ասում է. «Ես ամեն բան կա-

րող եմ ինձ զորացնող Հիսուս Քրիստոսով»: Այլ խոսքով՝ ամբողջ ստեղծագործության մեջ չկա որևէ բան, որ չկարողանաք անել Հիսուս Քրիստոսի զորությամբ:

Երբ Աստված ձեզ ցույց է տալիս խնդիրը, անմիջապես պետք է զորանաք և հաղթեք դա: Եթե դուք ներքուստ բարձրանաք, ընդունեք ձեր հանդեպ Աստծո սերը և մերժեք այդ կեղտոտ, ստախոս սատանային, որ ձեզ ասում է, թե որքան ապականված ու վատն եք, կսկսեք գործել հաղթությամբ: Հավանական է, որ այժմ գործում եք սարսափով, բայց կարող եք գործել բոլորովին այլ կերպ, եթե հավատաք, որ նոր ստեղծագործություն եք: Դուք երբեք ոչինչ չեք փոխի, մինչև ներքուստ չբարձրանաք և չասեք. «Փա՛ռք Աստծուն, ես յուրահատուկ եմ: Ես սուրբ եմ: Աստված ընտրել է ինձ: Նա լվացել է ինձ Գառնուկի այրամբ: Ես գործելու եմ այդ հիմքի վրա: Եվ ինձ չի հետաքրքրում, սատանա՛, թե որքան սխալներ եմ արել: Աստված այնչափ մեծ է, որ բարձրացնում է ինձ, և ստիպում է, որ շարունակեմ: Նա մաքրում է իմ բոլոր կեղտոտությունները»:

Ի՞նչը կարող է բաժանել ձեզ Աստծուց, եթե «իմանալով հանդերձ գիտեք», որ Աստված սիրում է ձեզ: Չկա որևէ խնդիր: Դուք կհաղթահարեք ամեն բան: Դուք ցանկանո՞ւմ եք լինել հաղթող: Եթե այո՝ պատասխանե՛ք ևս մեկ հարցի՝ դուք ցանկանո՞ւմ եք ունենալ մարտահրավերներ: Սա է աճելու միակ ճանապարհը: Եթե դուք չունեք որևէ խնդիր, երբեք չեք ունենա հաղթելու որևէ առիթ: Ինչո՞վ եք հղկելու ձեր հավատքի ատամները: Այն խնդիրները, որոնք ծառանում են ձեր դեմ, գործածե՛ք որպես հնարավորություն՝

աճելու համար: Հայտնաբերե՛ք այն, ինչ կաներ Աստված, քանի որ Նա սիրում է ձեզ: Եթե դուք վստահեք Աստծուն, թույլ տաք, որ Նա սիրի ձեզ, և դուք էլ սիրեք Նրան, կարող եք մոռանալ հավատքով գործելու ձեր բոլոր փորձերը և մտնել Նրա հանգստի մեջ:

Եթե միայն թույլ տաք, որ Աստված սիրի ձեզ, և դուք էլ Նրան սիրեք, ամբողջ օրը կշրջեք արբած մարդու նման՝ Հոգով արբած մարդու: Ահա այդ ժամանակ է, երբ պարագաները չեն ազդի ձեզ վրա, քանի որ դուք գնում եք ամենուրեք՝ գործելով Աստծո սիրով:

Երբ ես մկրտվեցի Սուրբ Հոգով, առաջին 3 շաբաթը արբած էի Աստծո սիրով: Մարդիկ շարունակ ինձ հարցնում էին. «Ի՞նչ է պատահել քեզ: Դու բոլորովին ուրիշ ես: Ջո՛յս, այս ամենն անհավատալի է: Ի՞նչ է պատահել քեզ»: Կարիք չկար, որ ես ինչ-որ բան ասեի նրանց՝ համոզելու համար, որ փոխվել էի: Նրանք դա տեսնում էին:

Եթե դուք գործում եք Աստծո սիրով, միշտ կժպտաք: Դուք ավելի կգեղեցկանաք: Կունենաք ուժ և եռանդ: Կկարողանաք ծառայել մարդկանց: Պատճառն այն է, որ դուք կլիցքավորվեք Սուրբ Հոգով, և ցանկացած կարիք, որ կունենաք, կբավարարվի:

Ինքներդ ձեզ ասե՛ք. «Աստված սիրո՛ւմ է ինձ: Ալելուի՛ա, Աստված սիրո՛ւմ է ինձ: Ես Նրա յուրահատուկ զավակն եմ: Աստված սիրո՛ւմ է ինձ»: Այնուհետև առա՛ջ շարժվեք, հավատքի մեծ քայլ արե՛ք և հավատացե՛ք դրան:

Աստված իսկապես սիրո՛ւմ է ձեզ:

Ապրե՛ք նոր կյանք

Եթե դուք երբեք չեք հրավիրել Հիսուսին՝ դառնալու ձեր Տերը և Փրկիչը, ես հորդորում եմ, որ դա հիմա անեք: Աղոթե՛ք հետևյալ աղոթքը: Եթե իսկապես անկեղծ լինեք, կապրեք նոր կյանք՝ Քրիստոսով:

«Հա՛յր Աստված, ես հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը Քո Որդին է՝ աշխարհի Փրկիչը: Ես հավատում եմ, որ Նա մահացավ խաչափայտին ինձ համար և կրեց իմ բոլոր մեղքերը: Նա գին վճարեց իմ մեղքերի համար: Նա վերցրեց իմ պատիժը, որին ես էի արժանի: Ես հավատում եմ, որ Հիսուսը հարություն առավ մեռելներից և այժմ նստած է Քո աջ կողքին: Ես Քո կարիքն ունեմ, Հիսո՛ւս: Ների՛ր իմ մեղքերը, փրկի՛ր ինձ, ե՛կ ու ապրի՛ր իմ հոգում: Ես ցանկանում եմ վերստին ծնվել»:

Այժմ հավատացե՛ք, որ Հիսուսն ապրում է ձեր սրտում: Դուք ներված եք, արդարացված եք և Երկինք կգնաք: Այցելե՛ք լավ եկեղեցի, որտեղ սովորեցնում են Աստծո Խոսքը, և աճե՛ք Քրիստոսի մեջ: Ոչ մի բան ձեր կյանքում չի փոխվի՝ առանց Աստծո Խոսքի գիտության: Հովհաննեսի Ավետարանի 8.31,32 խոսքերում ասվում է. «...Եթե դուք Իմ Խոսքի մեջ կենաք, ճշմարտապես Իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ»:

Ես հորդորում եմ, որ ընդունեք Աստծո Խոսքը, սերմանեք ձեր սրտի խորքում և փոխվեք, ինչպես Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի 3.18-ում է ասվում. «Բայց մենք՝ ամենքս, բաց երեսով տեսնելով Տիրոջ փառքը՝ ինչպես հայելու մեջ, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք՝ փառքից դեպի փառք՝ ինչպես Տիրոջ Հոգուց»:

ԱՍՏՎԱԾ ՍԻՐՈ՛ՒՄ Է ՁԵԶ

Աստված ցանկանում է, որ դուք հավատաք և վստահեք այն փաստին, որ Նա սիրում է ձեզ: Նա սիրում է ձեզ ոչ թե այն պատճառով, որ դուք ինչ-որ ճիշտ բան եք արել, այլ՝ Նա պարզապես սիրում է ձեզ: Այս կատարյալ սիրո գիտակցումը կհեռացնի ամեն վախ՝ ըստ Հովհաննեսի առաջին թղթի 4.18 խոսքի: Եփեսացիներին ուղղված թղթի 3-րդ գլխում ասվում է, որ մենք արմատավորվում և հաստատվում ենք Աստծո սիրով:

Ես հավատում եմ, որ մարդկանց դժվարությունների մեծ մասը այն գիտության պակասից է, որ Աստված սիրում է նրանց անհատապես: Դա նրանց պատճառում է վախ, անհանգստություն, անվստահություն և շատ այլ նեղություններ, որոնցից Հիսուսն արդեն ազատագրել է մեզ:

Կարդացեք այս գիրքը՝ հավատալով, որ Աստված ձեր հանդեպ ունեցած Իր սիրո էության մասին հայտնություն կտա ձեզ՝ որպես թանկագին անձնավորության՝ Քրիստոսի մարմնի մեջ: ԴՈՒՔ ԿԱՐԵՎՈՐ ԵՔ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ:

Հեղինակի մասին

Ջոյս Մայերն Աստծո Խոսքն ուսուցանում է դեռևս 1976 թվականից և ամբողջական ծառայության է անցել 1980 թվականից: Որպես հովվի օգնական «Կյանք» Քրիստոնեական կենտրոնում, որը գտնվում է Միսսուրիի Լյուիս քաղաքում, նա զարգացրել, կոորդինացրել և սովորեցրել է «Կյանք՝ Խոսքի մեջ» անվանումով շաբաթական հավաքույթներում: Հինգ տարի անց Աստված այդ աշխատանքն ավարտին է մոտեցնում՝ առաջնորդելով նրան հաստատելու իր անձնական ծառայությունը և այն կոչելու «Կյանք՝ Խոսքի մեջ» անունով:

Ջոյսի «Կյանք՝ Խոսքի մեջ» ռադիոհաղորդումը հեռարձակվում է ավելի քան 250 ազգային ռադիոկայաններով: 1993 թվականին հեռարձակվեց «Կյանք՝ Խոսքի մեջ՝ Ջոյս Մայերի հետ» 30 րոպեանոց հեռուստաձրագիրը, որը տարածվեց ամբողջ Միացյալ Նահանգներով, ինչպես նաև մի քանի արտասահմանյան երկրներով: Նրա ուսուցողական տեսահոլովակներից օգտվում են շատ երկրներում: Նա հաճախ է ճամփորդում՝ ուսուցանելով «Կյանք՝ Խոսքի մեջ» խորագրով կոնֆերանսների ընթացքում՝ հանդես գալով տեղական եկեղեցիներում: Ջոյսը և ամուսինը՝ Դեյվը, ով «Կյանք՝ Խոսքի մեջ» ծառայության ֆինանսների կառավարիչն է, ամուսնացել են ավելի քան 31 տարի առաջ և ունեն

չորս երեխա: Երեքն ամուսնացած են, իսկ կրտսեր որդին ներկայումս իրենց հետ ապրում է Ֆենտոնում, Միսսուրիի Լյուիս քաղաքի արվարձանների մոտ:

Ջոյսը հավատում է, որ իր կյանքի կոչումը՝ հավատացյալներին Աստծո Խոսքի մեջ հաստատելն է: Նա ասում է. «Հիսուսը մահացավ, որ ազատի գերիներին, բայց կան քրիստոնյաներ, որոնք շատ քիչ հաղթություններ ունեն կյանքում, կամ էլ, առհասարակ, չունեն»: Շատ տարիներ առաջ իրեն հայտնաբերելով նույն իրավիճակում և Աստծո Խոսքը կիրառելով՝ նա ձեռք է բերում ազատություն: Ապրելով հաղթության կյանք՝ Ջոյսը սպառազինվում է՝ գերիներին ազատելու և «մոխրի փոխարեն փառք» բերելու:

Ջոյսը շնչավոր բժշկության վերաբերյալ և դրա հետ կապված թեմաներով ուսուցանել է տարբեր երկրներում՝ օգնելով հազարավոր մարդկանց: Նա ձայնագրել է ավելի քան 165 տարբեր ձայներիզների ալբոմ, և հեղինակ է 25 գրքերի, որոնք արժեքավոր են Քրիստոսի մարմնի համար: Նրա «Զգացմունքների բժշկություն» ծրագրաշարն ունի 23 ուսուցման ժամեր: Այս ծրագրում ներկայացնում է հետևյալ նյութերը՝ «Վստահություն», «Մոխրի տեղ՝ փառք» (ներառում է ծրագիր), «Ղեկավարել զգացմունքները», «Վրդովմունք, վիրավորվածություն և աններողամտություն», «Մերժվածության արմատը» և «Բժշկել սրտով կոտրվածներին» 90 րոպեանոց աստվածաշնչյան խոսքերից կազմված ձայնասկավառակը:

Ջոյսի «Մտքի ձևավորում» գիրքը նկարագրում է մտքի թեմային նվիրված հինգ տարբեր ձայներիզային քարոզչություններ, որոնք ներառում են «Մտավոր ամրոցներ և մտածողություններ», «Անապատային մտածողություն», «Մարմնավոր միտք», «Անհանգստություն և մտահոգված միտք», «Միտք, բերան, տրամադրություն և դիրք» թեմաները: Փաթեթը նաև պարունակում է Ջոյսի «Միտքը կռվի դաշտն է» 260 էջանոց հզոր գիրքը: Նա ունի սիրո թեմային նվիրված երկու տեսաժապավենային քարոզչություն՝ «Սերը՝ ...» և «Սերը՝ որպես բարձրագույն զորություն» վերնագրերով:

Գրե՛ք Ջոյս Մայերի աշխատասենյակ՝ նյութերի, կատալոգների և մանրամասն տեղեկությունների համար, եթե ձեզ հետաքրքրում է, թե ինչպես ձեռք բերել այն տեսաժապավենները, որոնց կարիքն ունեք՝ ձեր կյանքում կատարյալ բժշկություն բերելու համար:

Բացահայտի՛ր Աստծո անվերապահ սիրո պարգևը քեզ համար

Աստծո զորության և սիրո ամեն մասնիկ հասանելի է քեզ, այսօր: Դու պարզապես մեկը չես ամբոխի մեջ: Աստված սիրում է քեզ՝ նույնիսկ եթե լինեիր միակ մարդը Երկրի վրա: Խնդիրն այն է, որ ինչպես շատ մարդիկ, դու նույնպես չես կարող հասկանալ դա... կամ եթե հասկանում ես մտքով, չես կարող զգալ այն սրտով. այժմ դու կարո՛ղ ես: Այս ոգեշնչող հզոր գիրքը, քեզ ցույց կտա.

- Ինչպե՞ս ճանաչել Աստծո սերը,
- Ինչպե՞ս դադարեցնել հետաքրքրվելը՝ արդյո՞ք բավական լավն ես Աստծո համար,
- Ինչպե՞ս կարելի է հայտնություն ստանալ Աստծո զարմանալի սիրո մասին,
- Ինչպե՞ս գտնել Աստծուն նույնիսկ կյանքի ամենացավոտ հանգամանքներում,
- Ինչպե՞ս Աստծո սերը կփոխի քեզ ընդմիշտ:

Կիսվելով սեփական կյանքի հայտնությունով՝ Ջոյս Մայերը սուրբգրային խոսքերով և իմաստությամբ կբացի պատուհան՝ դեպի Աստծո սերը... և թող այդ լույսը անձնապես փայլի քեզ վրա: